

թիւներն բաւական օգուտ կքաղեն ռուսահայոց լրագիրներէն, նա մանաւանդ *Մշակէն*:

14 Նոյեմբեր

Կրօնական գործոց խորհրդականն եկեղեցւոյ եւ եկեղեցականներուն բարեկարգութեանը վերաբերեալ կանոնագիր մը խմբագրելու վրայ է:

Կրթական գործոց խորհրդականն ալ վարժարաններու բարեկարգութեան վերաբերեալ ծրագիր մը պատրաստելու զբաղած է:

Տնտեսական գործոց խորհրդականն ալ ազգային սնտուկը բարեկարգելու համար ծրագիր մը փնտռելու ետեւէ է:

Ինչպէս յայտնի կտեսնուի՝ յոտից ցզլուի բարեկարգութեան պետք ունինք, սակայն անուրանալի ճշմարտութիւն մ'է, որ բարեկարգութենէն աւելի դրամի պետք ունինք:

Խնդրեցէ՛ք գորամն, եւ ամենայն ինչ յաւելցի ձեզ...

**

Սեբաստիայէն հետեւեալ հեռագիրն եկաւ. «Կուսակալն ազգային գաւառական ընդհ. ժողովոյ անդամները բանտարկեց»:

15 Նոյեմբեր

Աւերակք Հայաստանի կառավարութեան կողմէն ամեն օր կփնտռուին, ինչպէս նաեւ այն ամեն գիրքերն, որոնց մէջ *Հայաստան* բառն կգտնուի:

Ամեն օր կձերբակալուին եւ կբանտարկուին Հայկայ եւ Վարդանայ պատկերներն:

Երէկ մաքսատունէն արգիլուեցաւ 1881 - ի օրացոյցներէն յիսուն օրինակ, որ Տրապիզոնի շոգենաւը կտարուէր...:

**

Սեբաստիայէն հետեւեալ հեռագիրն ընդունուեցաւ այսօր.

«Կուսակալն քաղաքական ժողովոյ անդամներն ալ բանտարկեց»:

16 Նոյեմբեր

Սեբաստիայէն հետեւեալ հեռագիրը դրկած են.